

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Յովհաննես Գրիգորյանի հայրենեագությունը

Երևույթների պարողիկ կերպընկալումը բանաստեղծությունը դուրս է բերում *բուն պարողիայի* կազմաբանական տիրույթից, և բուն պարողիային հատուկ հստակ այլտեքստային կրկնությունը փոխարինում ընդհանրական-հանրառայտ կրկնությամբ, որն այս դեպքում պարտադիր գործում և ընկալվում է նաև իբրև սեփական տեքստ: Բանաստեղծումի այս կերպը բյուրեղացավ Յովհաննես Գրիգորյանի պոեզիայում և նրա բանաստեղծության նշաններից է: Այն միանգամից դժվարընկալելի է և հաճախ քյուր մեկնաբանությունների է արժանանում: Բուն պարողիաներում (օրինակ՝ Յովհ. Թումանյանի և Մ. Նալբանդյանի՝ համապատասխանաբար՝ Յովհ. Յովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, առա...» բանաստեղծության ու Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի «Վարդանի երզը» հատվածի հանրառայտ պարողիաները), նկատելի-ճանաչելի չէ որևէ կոնկրետ հեղինակ ու ստեղծագործություն, այլ նկատելի է երևույթ, որ ընդհանրական է ու վերագրելի շատ հեղինակների: Այս կերպ Յովհ. Գրիգորյանի պարողիկ կերպընկալումին են ենթարկվում հատկապես հայրենասիրական պոեզիան և սիրերգությունը, իսկ «Երկու ջրհեղեղի արանքում» ու «Կես ժամանակ» ժողովածուներում՝ նաև արտասահմանյան ուղևորության թեման, ուղեգրությունը: Սիրերգության պարողիկ կերպընկալումի որոշ կարևոր հարցեր քննաբանվել են մեկ այլ առիթով, իսկ ահա սույն հրապարակման մեջ խնդրադիր է հայրենեագության պարողիկ կերպընկալումը:

Ետչարենցյան շրջանի հայ պոեզիայում տարբեր և բազմաթիվ պատճառներով հայրենասիրական բանաստեղծությունը ամբողջովին վերածվեց ճիշտ է ոչ միշտ պարզ ներբողագրության: Եվ եթե խոսելու լինենք Յովհ. Շիրազի, Յ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, էլի ուրիշների հայրենասիրական որոշ իսկապես ընտիր բանաստեղծությունների մասին, ապա դրանք պետք է դիտարկենք նախևառաջ *Ներբողագրության* տարազի մեջ: Ներբողագրության շրջանակից ամբողջովին չհաջողվեց դուրս գալ նաև այնպիսի նորարարի, ինչպիսին Պարույր Սևակն է, գործիմանակ՝ *Իմ բարձրանու՛ն, //Իմ քաղցրանու՛ն,*

//Իմ տառապանք, //Իմ փառապանք, //Դճերի մեջ՝ դու ալեհեր, //Նորերի մեջ՝ նոր ու ջահել...

Յո՛վի. Գրիգորյանն ընդդիմանալով ներբողագրությանը՝ իր հայրենեգությունը խարսխում է իրական, կարելի է ասել՝ առօրեական ապրումին, և այդ պարագային, բնականաբար, չհասկացվելու մտահոգություն էլ պետք է լիներ: Դրա մասին է վկայում այն, որ Գրիգորյանը երբեմն ուղղակի բացատրում էր բանաստեղծելու իր կերպը՝ բուն բանաստեղծության մեջ՝ տալով նրանց տեսական հանգանակի արժեք:

«Քեզ հետ և քեզ համար» բանաստեղծության մամուլային հրապարակման մեջ, օրինակ, հետևյալ տողերը՝ Ներիր, որ քո գովքը ես չեմ գունազարդում //Նոյի տապանի որոնման տենդագին ջանքով //կամ վարդանների ու վասակների //բաջագործության մանրամասներով, հայրենասիրական պոեզիայում ներբողագրության պարողիկ կերպընկալումը լինելով, միևնույն ժամանակ նաև «բացատրության» դեր են կատարում: Այնուհայտ է, որ այդ խոսքերը հղված են առ ոչ այնքան բուն հասցեատերը՝ հայրենիքը, որքան՝ առ ընթերցողը: «Երգեր առանց երաժշտության» ժողովածուում վերերկրյա «բացատրական» հատվածի վերջին երկու տողերը բացակայում են: Կրճատման մղումներում, անտարակույս, երկրորդական դեր չի խաղացել այն հանգամանքը, որ ոչ միայն Յո՛վի. Գրիգորյանի, այլև ամբողջ սերնդի պոեզիան, հաղթահարելով բազում խոչընդոտներ, աստիճանաբար քաղաքացիություն էր ստանում: «Դանդաղ ժամեր» ժողովածուում «Քեզ հետ և քեզ համար» բանաստեղծությունն արդեն ներկայանում է վերջնականապես «ազատագրված» «բացատրական» հատվածներից, նոր՝ «Հայրերի հող» վերնագրով, և, եթե մեկնենք «Դանդաղ ժամեր» ժողովածուի հանգրվանային-մեկնակետային բնույթից, կարող ենք ասել, որ այս վերջնական տեսքն իբրև փաստ ցուցանում էր, որ հայրենիքի թեմայում Յո՛վի. Գրիգորյանը այրուհետ լծվելու էր պոետական բարձր նյութի կառուցումին՝ առանց չհասկացվելու մտահոգության. *Ես այս երգը երգում եմ գլխաբաց, //որովհետև դու նա ես, //ու՜մ ձեռքը պետք է իջնի մեր գլխին օրհնության նման, //երբ մենք ծանապարհ ենք ընկնում, //երբ մենք սկսում ենք օրը, //երբ մենք ծնունդ ենք տալիս տողին ու մտքին: //Ժժվար է խոսքով ասել այն, ինչ սրտում է պահված, //առավել ևս դժվար է լռել, //և դրա համար հրաժարվում եմ վերջակետ դնել, //որովհետև իմ այս երգը պիտի շարունակվի այնքան, //քանի դեռ կաս դու, //քանի դեռ ես կամ:*

Իսկ Յո՛վի. Գրիգորյանի ստեղծաբանական համակարգում հայրենիքի թեմայի տեղը, դերն ու նշանակությունը որոշարկելու առումով ավելորդ չեն համարում նշել, որ «Հայրերի հող» բանաստեղծությունն ընդգրկված է «Դանդաղ ժամեր» ժողովածուի «Առավոտյան ժամեր» բաժնում, որտեղ գերակայող հասկացություններն ու խորհրդանիշները գոյակորում են բանաստեղծի էությունն ու ձևավորում կենսագրությունը: Եվ սա այն դեպքում, երբ «Դանդաղ ժամեր» ժողովածուում ոչ մի բանաստեղծություն հենց այնպես չի ընդգրկված այս կամ այն բաժնում, ավելին՝ գրեթե ոչ մի բանաստեղծություն հենց այնպես չի նախորդում կամ հաջորդում մյուսին, ու, ընդհանրապես, կառուցաբանական նավարկելով «Դանդաղ ժամերը» լավագույն ժողովածուներից մեկն է հայ պոեզիայի պատմության մեջ:

Ժամանակի հայրենասիրական պոեզիայի կարծրակաղապարներից մեկը Հայաստանի տարածքային ու հայ ժողովրդի քանակական փոքրությունն ընդգծելով՝ մեծ կարողությունների ու կարելիությունների հետ համեմատումն էր: Այդ կարծրակաղապարի դասական ձևակերպումը (նաև՝ դրական իմաստով) Պարույր Սևակի «Սենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում» տողն է, իսկ կառուցումը՝ նույնի «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը: Հայրենիքի թեմայում Յո՛վի. Գրիգորյանի ընդդիմադիր կեցվածքն ու պարողիկ կերպընկալումը դրսևորվում են նաև այս տիրույթում: Կարևորն այն է, որ համարժեք (նկատի ունեն *փոքրիկ* տարազի պարագրկումը) կամ իջեցված համեմատություններում Յո՛վի. Գրիգորյանը կարողանում է խոր ընդհանրացումներ անել, ինչպես, օրինակ, «Հայաստան» զոդորիկ բանաստեղծության մեջ. *Սա իմ երկիրն է-չափսերով այնպիսին, //որ կարող եմ վերցնել հետս, //թե մի հեռու տեղ գնամ: //Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր, //փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ, //իսկ քարտեզի վրա //ընդամենը մի արցունքի կաթիլ... //Սա իմ երկիրն է-չափսերով այնպիսին, //որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ, //որ չկորցնեմ հանկարծ...*

Բանաստեղծման նույն սկզբունքներով և *փոքրիկ* տարազի բնագրաստեղծ առանցքով են գրված նաև «Աղոթք»՝ *Աստված իմ, /այսքան էլ փոքրիկ հայրենիք, /այսքան էլ փոքրիկ /Հայաստան, //նորածնի բարուր է իսկական... (ՀՄԵ, էջ 7)–* «Այսպես է եղել»՝ *Եվ ի՞նչ աներ Աստված, //որ լույ ՅՍԿ-ն եկավ հարմար, //որ լույ ՍՈՒԳ-ն եկավ հարմար, //որ լույ ԼՍՑ-ն եկավ հարմար, //քո փոքրիկ հողակտորի համար... (4Ժ, էջ 5)* բանաստեղծությունները: *Փոքրիկ* տարազը

միավորում է այս երեք բանաստեղծությունների թե ասելիքային, թե՛ գաղափարական տիրույթը, և զուցե պատահական չէ, որ Հովի, Գրիգորյանը «Հրեշտակներ մանկության երկնքից» ժողովածուում դրանք դրել է կողք-կողքի: Բայց *փոքրիկ*-ը մեկ այլ, այս անգամ հղացային մակարդակում ևս լուրջ գործառնություն ունի, այն, կարելի է ասել, այդ բանաստեղծություններին «պարտադրել» է *փոքրիկ* ծավալ («Հայաստան»՝ 10 տող, «Աղոթք»՝ 12 տող, «Այսպես է եղել»՝ 16 տող), այսպիսով՝ պարագրիկելով գրեթե բոլոր առումներով կատարյալ բանաստեղծական մի եռագրություն:

Պարոզիկ կերպընկալումը 1996-ին լույս տեսած «Երկու ջրհեղեղի արանքում» ժողովածուում արդեն բնագրաստեղծ գերակայություն է: «Ուստիկանական լրատու» բանաստեղծության մեջ այն արտահայտվում է դասական հայրենեգության բառապաշարի կիրառությամբ, որը ծառայում է իր հայրենիքից դուրս եկած և այլևս չվերադարձած հայ ժողովրդի *արտաքին* նշանները՝ ...բազմադարյան, բազմաշարչար, //տաղանդավոր, աշխատասեր, համբերատար, //աչքերի մեջ անսահման բախիծ, //սիրտը՝ կոտրված մի քանի տեղից... (Եջա, էջ 22) ներկայացնելու համար: *Արտաքին*-ը պատահական չեն ընդգծում. այդ բառով Հովի. Գրիգորյանը տարագրում է *այսպես կոչված* հայրենասիրական պոեզիայի՝ հայ ժողովրդի էությունության պարագրիկումի մակարդակը: Այդ կերպ՝ «դուք խելացի ու աշխատասեր մարդիկ եք // և կարող եք քարից հաց քամել // և միրգ՝ ժայռերից ու ծերպերից», «դուք Աստծո սիրասուն զավակներն եք // և առաջապահն եք նրա նվիրական գորբի», «դուք... հին ու տառապած ժողովուրդ եք» հարադրվագային «քաղումները» նույն *այսպես կոչված* հայրենասիրական պոեզիայից, «Հայ ժողովրդի պատմության համառոտ ձեռնարկ նրանց համար, ովքեր հաստափոր գրքեր կարդալու ոչ ժամանակ ունեն, ոչ էլ տրամադրություն» բանաստեղծությամ մեջ երևանում են հայ ժողովրդին *կլիշեացված* ճանաչումով ու ընկալմամբ բանաստեղծելու ամբողջ սնամեջությունն ու, մանավանդ, վտանգավորությունը, որը նույն բանաստեղծության մեջ ձևավորում է հակադիր սյուժե. ...հարձակվել են չորս կողմից, //պատառ-պատառ են արել, //հոշոտել են մոլուցքով //քաղցր բույրից խենթացած //վայրի գեռուն ու զագան... //...Սնացել է ափիս մեջ նշխարաչափ մի պատառ՝ //ամեն կողմից կրծուոված մեղրաբլիթ... Հայաստան:

Պարոզիկ կերպընկալումին հատուկ ընդհանրական-հանրահայտ կրկնությունն ունենալով իբրև հղացք, Գրիգորյանը ստեղծում է բնույթով նոր հայրենասիրական բանաստեղծություն, նոր սիրերգություն, նոր ուղեգրություն և այլն, բանաստեղծություն ներմուծելով նոր, հաճախ՝ անսովոր տարրեր: Այդպես, Սիքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունից հայտնի և, ընդհանրապես, շատ տարածված «Մեր հայրենիք թշվառ, անտեր» ձևակերպումը օգտագործելով իբրև պարոզիկ հղացք, «Չգիտեսթեինչ-2» բանաստեղծության մեջ Հովի. Գրիգորյանը բոլորովին նորովի է բանաձևում Հայրենիք հասկացությունը. *Հայրենիքները սովորաբար թշվառ են լինում, //և ինչքան շատ են թշվառ ու խեղճ, այնքան ավելի շատ են հայրենիք: //Իսկ գորեղ և հարուստ երկրները սովորաբար կոչվում են //անուճով, ասենք՝ Սնգլիա կամ Սիացյալ Նահանգներ, //և սովորաբար ոչ ոք չի մեռնում նրանց կարոտից //և հալումաչ լինում՝ ախ, իմ թշվառ հայրենիք, կանչելով, //այլ, ցանկության դեպքում, սովորաբար, տոմսեր են պատվիրում //ցանկացած ժամի և մեկնում են իրենց երկիր, սովորաբար //թերթ կարդալով և կամ սուրճ խմելով...:*

Այս առումով ընդունելի չէ «նոր սիրերգություն (այս պարագային՝ կարդա՛ հայրենեգություն-Ա.Ն.)» և «հակասիրերգություն» եզրերի նույնական կիրառությունը Հովի. Գրիգորյանի բանաստեղծությունների մասին խոսելիս, ինչպես դա անում է Գրիգոր Հակոբյանն իր արդեն հիշատակված հրաշալի հոդվածում: Համենայնդեպս, այն տարրերը, որ օգտագործում է Գրիգորյանն իր պոեզիայում, ընթացային այս փուլում արդեն չեն ընկալվում ու գիտակցվում իբրև *հակա* կամ *անտի*. Եվ բացի այդ, ամենակարևորը, ինչպես Սեյրան Գրիգորյանն է նկատում Հովի. Գրիգորյանի պոեզիայի առիթով՝ «Կենցաղը, քաղաքական լուրը, հեռուստատեսային հաղորդումը, փողոցի առօրեական միավորները խուժում են բանաստեղծական տող, քայց երբեք չեն խախտում բանաստեղծության հավերժական հիմունքները՝ պատկերավոր մտածողությունն ու դրամատիզմը» (ընդգծումն իմն է-Ա.Ն.): Այնպես որ, «նոր»-ն առավել հարագատորեն է արտացոլում հարցի դրվածքը:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

